ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

# Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

2024 թվականի ընթացքում ներքոնշյալ ծառայողական մեքենաներին/ 5 մեքենա/ և աշխատակիցների կցագրված մեքենաներին/ 9 մեքենա/ տրամադրվող վառելիքի համար անհրաժեշտ է նախատեսել 16000 լիտր բենզին և 8000 կգ բնական գազ:

***Ծառայողական մեքենաներ՝***

Toyota Camry մակնիշի 020LL70 պետհամարանիշ, Nissan Teanaմակնիշի 035PP55 պետհամարանիշ, GAZ3110 մակնիշի 486LL70 պետհամարանիշ, VAZ-21213 մակնիշի 683LL70 պետհամարանիշ, OPELASTRA մակնիշի 34NC180 պետհամարանիշ, :

***Անձնական մեքենաներ՝***

Կարենիս գյուղի վարչական ղեկավար **Արմեն Բաղդասարյանին** պատկանող OPEL մակնիշի 37QM699 պետհամարանիշ, Ֆանտան գյուղի վարչական ղեկավար **Դավիթ Իվանյանին** պատկանող VAZ-21214 մակնիշի 98DP999 պետհամարանիշ, համայնքի ղեկավարի տեղակալ **Գայանե Գրիգորյանին** պատկանող PEUGEOT մակնիշի 37GZ175 պետհամարանիշ,համայնքի ղեկավարի խորհրդական **Արսեն Խլղաթյանին** պատկանող Toyota Camry մակնիշի 88XX828 պետհամարանիշ, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար **Սուրեն Մուրադյանին** պատկանող MERCEDES-BENZ S320 մակնիշի 78SM007 պետհամարանիշ, համայնքի ղեկավարի օգնական **Արտավազդ Ալեքսանյանին** պատկանող BMW մակնիշի 37AN633 պետհամարանիշ, համայնքի ղեկավարի օգնական **Երեմ Սահակյանին** պատկանող ISUZU մակնիշի 18OS622 պետհամարանիշ, համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ **Բենիկ Բալբաբյանին** պատկանող Mersedes Benz C320 36AT867 պետհամարանիշ, առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ **Վարուժան Բարսամյանին** պատկանող Mercedes Benz E230 մակնիշի 35NS119 պետհամարանիշ:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **Ս.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**29.11.2023թ**

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ...

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

# Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

*Հարգել՛ի պարոն Շահգալդյան,*

2024 թվականի ընթացքում Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը կադաստրի պետական կոմիտեում գրանցելու համար, առաջարկվում է համայնքի բյուջեից տրամադրել 5 400 000 /հինգ միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ գումար:

**ԶԵԿՈՒՑՈՂ՝** **Բ. ԲԱԼԲԱԲՅԱՆ**

***12.12.2023թ.***

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

# Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

***Հարգել՛ի պարոն Շահգալդյան,***

Չարենցավան համայնքի 2024թ բյուջեում տրանսպորտային միջոցների վարձակալության հոդվածով, առաջարկվում է նախատեսել 1500,0 հազ. դրամ:

**ԶԵԿՈՒՑՈՂ՝** **Բ. ԲԱՐՍԱՄՅԱՆ**

***14.12.2023Թ.***

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ Է 14 12 2023

Չարենցավան համայնքի ղեկավար
Պարոն Հ. Կ. Շահգալդյանին

# ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Հ.Կ. Շահգալդյան

Համաձայն ՀՀ Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրի՝ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքը ներկայացնում է 2024 թվականի Չարենցավան քաղաքի Ա.Գրիգորյանի անվան «Ծիծեռնակ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի, մի մասնաշենքի վերակառուցման և գույքի ձեռքբերման և Չարենցավան քաղաքի «Լուսաբաց» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի, մի մասնաշենքի վերակառուցման և գույքի ձեռքբերման ծրագրերը:

Ա.Գրիգորյանի անվան «Ծիծեռնակ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի, մի մասնաշենքի վերակառուցման և գույքի ձեռքբերման ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 435152370 (չորս հարյուր երեսունհինգ միլիոն մեկ հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ, որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժինը կազմում է՝ 130545711 (մեկ հարյուր երեսուն միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար յոթ հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ:

«Լուսաբաց» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի, մի մասնաշենքի վերակառուցման և գույքի ձեռքբերման ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 471957500 (չորս հարյուր յոթանասունմեկ միլիոն ինը հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժինը կազմում է՝ 141587250 (մեկ հարյուր քառասունմեկ միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Խնդրվում է ներդրվող մասնաբաժինը ներառել 2024 թվականի բյուջեի ծախսերում:

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գ.Գրիգորյան

04.10.2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Չարենցավան համայնքի ղեկավար
Պարոն Հ. Կ. Շահգալդյանին

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Պարոն Հ.Կ. Շահգալդյան,

ՀՀ Արտակարգ Իրավիճակների նախարարության կողմից 2023 թվականի հոկտեմբերի 24-ին և նոյեմբերի 2-ին Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքում փորձարկվել են շչակներ:

Փորձարկումների արդյունքերը չեն արդարացվել, ինչի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել նոր, գերհզոր շչակ և հեռակառավարման վահանակ:

Հաշվի առնելով վերը նշված համգամանքը՝ խնդրվում է 2024 թվականի համայնքի բյուջեի ծախսերում ընդգրկել մեկ եռաֆազ շչակ տեղադրումով (C-40,000)՝ արժեքը 400.000 ՀՀ դրամ և մեկ շչակի հեռակառավարման վահանակ տեղադրումով (Луч5-М)՝ արժեքը 400000 ՀՀ դրամ:

Հարգանքով՝

Համայնքի ղեկավարի խորհրդական՝ Ա.Խլղաթյան

27.11.2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ**

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

**ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ս.ՎԱՐԴԱՆՅԱՆԻՑ**

## *ԶԵԿՈՒՑԱԳԻՐ*

***Հարգելի՛ պարոն Շահգալդյան,***

Հաշվի առնելով Չարենցավան համայնքում դեռևս թափառող շների մեծ քանակը՝ անհրաժեշտ է 2024 թվականին նույնպես շարունակել թափառող կենդանիների վնասազերծման ծառայության ձեռքբերումը:

Ուստի առաջարկում եմ՝ համայնքի բյուջեից տրամադրել 5 մլն դրամ՝ 180 թափառող կենդանի վնասազերծելու և ստերջացնելու համար:

***Համայնքի ղեկավարի առաջին փեղակալ՝*** ***Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ***

***13.12.2023թ.***

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
13 12 2023

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

# Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

*Հարգել՛ի պարոն Շահգալդյան,*

Չարենցավան համայնքի կենցաղային աղբահանության ծառայությունների գնման համար, առաջարկվում է համայնքի բյուջեից տրամադրել 87 մլն. դրամ գումար, 29000 քմ աղբ տեղափոխելու համար:

*ԶԵԿՈՒՑՈՂ՝* *Բ. ԲԱԼԲԱԲՅԱՆ*

*01.12.2023թ.*

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

# Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

*Հարգել՛ի պարոն Շահգալդյան,*

2024 թվականի ընթացքում Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարման կամ վարձակալությամբ տրամադրելու հայտարարությունները օրաթերթում տեղադրելու համար, առաջարկվում է համայնքի բյուջեից տրամադրել 600 000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ գումար:

***ԶԵԿՈՒՑՈՂ՝*** ***Բ. ԲԱԼԲԱԲՅԱՆ***

***14.12.2023թ.***

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԱՑԱԾ է 14 12 23

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

# Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

*Հարգել՛ի պարոն Շահգալդյան,*

Չարենցավան համայնքի սանմաքրման աշխատանքները իրականացնելու համար, առաջարկվում է համայնքի բյուջեից տրամադրել 107,8 մլն. դրամ գումար, ըստ կից ներկայացվող հավելվածի:

*ԶԵԿՈՒՑՈՂ՝* *Բ. ԲԱԼԲԱԲՅԱՆ*

*01.12.2023թ.*

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

# Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

Հարգելի՛ պարոն Շահգալդյան,

Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին դրամական օգնություն հատկացնելու նպատակով՝ «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով առաջարկվում է հատկացնել 25000000 / քսանհինգ միլիոն/ ՀՀ դրամ:

ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

14.12.2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

# Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

Հարգելի՛ պարոն Շահգալդյան,

Համաձայն «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթների՝ անհրաժեշտ է Չարենցավանի համայնքապետարանի և Չարենցավանի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը փոխանցել պետական սեփականության:

Վերոնշված իրավասությունն իրականացնելու համար խնդրում եմ համայնքի բյուջեից տրամադրել 600000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ:

ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

14.12.2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

## Զ Ե Կ Ո Ւ Ց Ա Գ Ի Ր

Հարգելի՛ պարոն Շահգալդյան,

2024 թվականի Չարենցավան համայնքի գնումների փաստաթղթերի թարգմանությունների համար անհրաժեշտ է տրամադրել 960000 / ինը հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

**14.12.2023թ.**

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Հ.Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

# ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Ձեզ ենք ներկայացնում կրթության,մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի տարեկան միջոցառումների ցանկը և կազմակերպման համար անհրաժեշտ ծախսերը՝ 2024 թվականի բյուջեում ընդգրկելու համար:

Կրթության,մշակույթի,սպորտի,
երիտասարդության և սոցիալական
աջակցության բաժնի պետ ____________ Ա.ԶԱՔԱՐՅԱՆ

13.11.2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԱՑՎԱԾ Է «13» 11 2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
Հ.Կ.ԾԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Ձեզ ենք ներկայացնում Ամանորյա տոպրակների/պարկիկների/ թվով 1400 հատ ձեռք բերման համար անհրաժեշտ ծախսը՝ 1400000/մեկ միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ 2024 թվականի բյուջեում ընդգրկելու համար:

Կրթության,մշակույթի,սպորտի,
երիտասարդության և սոցիալական
աջակցության բաժնի պետ _______________ Ա.ԶԱՔԱՐՅԱՆ

30.11.2023թ.

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# 2024թ.միջոցառումների ցանկ

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ --------- 2024թ.**

| Ծառայության | | | | | 11 Ծ/Ռ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | **մատուցման** | |
| **Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)** | **Տեխնիկական բնութագիրը** | **Չափման միավորը** | **ընդհանուր գինը** | **Ընդհանուր քանակը** | **հասցեն** | **ժամկետը** |
| | **Սուրբ Սարգսի տոն**<br>**/հունվար 27 /**<br>**Միջոցառում Չարենցավան քաղաքում**<br>Անհրաժեշտ է՝ ձիու/սպիտակ/ և ձիավարի վարձակալություն 2ժամով:՛Ձիավարը պետք է լինի ոսկեգույն սաղավարտով և կարմիր ատլասե թիկնոցով:<br>Փուչիկ՝ փչած,ձողերի վրա հագցրած – 300 հատ /կարմիր,միջին չափի, փայլուն, հաստ, սրտաձև, ձողեր/սպիտակ/-300 հատ, ծաղիկ – 300 հատ /գունավոր հերբերա/ 70սմ , 300 հատ տարոսիկ կաթնային շոկոլադով, 300 հատ՝ թխվացքաբլիթով՝ փաթեթավորված թափանցիկ թղթով,<br>ձայնային տեխնիկայի սպասարկում: | Դրամ | 180.000 | 1 | | 1-ին եռամսյակ մինչև 27.01.2024թ. |
| | **Հայոց բանակի օր Հունվարի 28**<br>**32 ամյակ**<br>**Այցելություն քաղաքային պանթեոն**<br>Անհրաժեշտ է՝<br>ծաղկեպսակ - 6 հատ՝ բաղկացած թարմ ծաղիկներից /50 վարդ, 40 գերբերա, 20 մեխակ, 4 բիոֆլորայով, հավաքված 1-1,2մ տրամագծով, պենոպլաստե շրջանակի վրա, հետևի ձևավորումը՝ ռուսկուսի կամ պտերի տերևներով, կանաչ ներկված փայտե ոտնակների վրա հենված, հիշատակը խորհրդանշող սգո ժապավենով, գրվող տեքստը՝ ոսկեփայլ, բարձրությունը մինչև 1,5-1,6մ, ծաղիկ - 500 հատ /կարմիր մեխակ 80 սմ/ | Դրամ | 440.000 | 1 | | 1-ին եռամսյակ մինչև 28.01.2024թ. |
| | **Տյառնընդառաջ**<br>**/փետրվարի 13/**<br>**Չարենցավանի Սուրբ Փրկիչ եկեղեցու բակում**<br>Անհրաժեշտ է՝ կոնֆետ – 10կգ /3կգ. գունավոր դրաժե, 3կգ շոկոլադե դրաժե, 4կգ. սրտաձև շոկոլադե կոնֆետներ/, 3կգ. շոկոլադապատ հալվա փաթեթավորված/, աղանձ -3 կգ /փաթեթավորված թափանցիկ թղթով/,<br>աղի-բուղի – 3կգ /փաթեթավորված թափանցիկ թղթով/, նվերներ նորապսակներին - / էլեկտրական թեյնիկ- 12-15 հատ՝ 1800 վտ հզորությամբ, 1,8 լիտր | դրամ | 220.000 | 1 | | 1-ին եռամսյակ մինչև 13.02.2024թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | տարողությամբ, նյութը՝ ջերմակայուն ապակի/, միջին չափի 4 ծղոտե զամբյուղների և հաղորդավարի հրավեր,<br>ձայնային տեխնիկայի սպասարկում: | | | | | |
| | **Պատանիների և աղջիկների վոլեյբոլի բաց առաջնություն**<br>**/փետրվար 19-23/**<br>Առաջնությունը տեղի կունենա Ա.Մանուկյանի անվան մարզադպրոցում/6թիմ/<br>Անհրաժեշտ է 2 հատ գավաթ /մեծ/, պատվոգիր 72 հատ, մեդալ 72 հատ /1տեղ -24հատ, 2 տեղ-24 հատ, 3տեղ -24 հատ/, ձայնային տեխնիկայի սպասարկում, ջուր 0.5լ/20հատ/,մեկանգամյա օգտագործման բաժակ/40 հատ/: | դրամ | 120000 | 1 | | 1-րդ եռամսյակ մինչև 19.02.2024թ. |
| | **Կանանց միջազգային օր**<br>**/մարտի 8/**<br>Միջոցառում երաժշտական դպրոցի մեծ դահլիճում, «ԿԱԴԱՆՍ» անսամբլի հրավեր / 1.5 ժամ տևողությամբ/, 300 հատ հրավիրատոմս /փայլուն փոտոթղթով, երկկողմանի ծալվածքով, գրված շնորհավորական տեքստով, արծաթագույն տառերով/, տեխնիկայի վարձակալություն և սպասարկում | դրամ | 850.000 | 1 | | 1-ին եռամսյակ մինչև 12.03.2024թ. |
| | **Ջարենցի ծննդյան օր**<br>**/մարտի 13/**<br>Միջոցառում հուշասրահում, ծաղիկների խոնարհում հրապարակում,ֆուրշետ 25 հոգու համար<br>Կազմակերպման համար անհրաժեշտ են ծաղիկներ՝ 50 հատ կարմիր վարդ /70սմ/, ձայնային տեխնիկայի սպասարկում, 1 հատ տորթ 25 հոգու համար սերուցքային կրեմով, 5 հատ բնական հյութ /1լ /, կարմիր կիսաչոր գինի 4 հատ, 2 հատ կիսաչոր շամպայն, 2 տուփ խմորեղեն 10 կտորից բաղկացած, պատրաստված շերտավոր խմորից/ , միրգ / 1 կգ խնձոր, 1 կգ տանձ, 1կգ նուռ, 1 կգ խաղող, 1 կգ բանան, 1 կգ արքայանարինջ, 1 հատ արքայախնձոր/, շնորհակալագիր 10 հատ: | դրամ | 100.000 | 1 | | 1-ին եռամսյակ մինչև 13.03.2024թ. |
| | **Պատանիների և աղջիկների բասկետբոլի բաց առաջնություն**<br>**/մարտ 18-22/**<br>Առաջնությունը տեղի կունենա Ա.Մանուկյանի անվան մարզադպրոցում/6թիմ/<br>Անհրաժեշտ է 2 հատ գավաթ /մեծ/, պատվոգիր 60 հատ, մեդալ 60 հատ /1տեղ -20 հատ, 2 տեղ-20 հատ, 3տեղ -20 հատ/, ձայնային տեխնիկայի սպասարկում, ջուր 0.5լ/20հատ/,մեկանգամյա օգտագործման բաժակ/40 հատ/: | դրամ | 110.000 | 1 | | 1-րդ եռամսյակ մինչև 18.03.2024թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Թատրոնի միջազգային օր / մարտի 27/ Թատերական ներկայացում** «ԲՈՀԵՄ» թատրոնի հրավեր/1.5 ժամ տևողությամբ/, ներկայացման դերասանուհիների յուրաքանչյուրի համար 1փունջ ծաղիկներ՝ 7 հատ հոլանդական վարդ՝ 70 սմ երկարությամբ, 300 հատ հրավիրատոմս /փայլուն փոտոթղթով, ոսկեզօծ տառերով/, տեխնիկայի վարձակալություն և սպասարկում: | դրամ | 900.000 | 1 | | 1-ին եռամսյակ մինչև 30.03.2024թ. |
| | **Մայրության գեղեցկության օր / ապրիլի 7/** Համերգ/1.5 ժամ տևողությամբ/, ժող.գործիքների համույթի հրավեր, տեխնիկայի վարձակալություն և սպասարկում,300 հատ հրավիրատոմսի տպագրություն: | դրամ | 800.000 | 1 | | 2-րդ եռամսյակ մինչև 09.04.2024թ. |
| | **Մեծ եղեռնի հիշատակի օր /ապրիլի 24/** Այցելություն Չարենցավան համայնքի Սուրբ Փրկիչ եկեղեցի, խոնարհում զոհերի հիշատակը հավերժացնող հուշաքարի մոտ: Անհրաժեշտ է 200 հատ սպիտակ մեխակ/70 սմ/,1 հատ ծաղկեպսակ բաղկացած թարմ ծաղիկներից /30 վարդ, 20 գերբերա, 20 մեխակ, 6 կապ քրիզանթեմ, 5 կապ աուստրոմերիա/, 4 բիոֆլորայով, հավաքված 1-1,2մ տրամագծով, պենոպլաստե շրջանակի վրա, հետևի ձևավորումը՝ ռուսկուսի կամ պտերի տերևներով, կանաչ ներկված փայտե ոտնակների վրա հենված, հիշատակը խորհրդանշող ժապավենով, գրվող տեքստը՝ ոսկեփայլ, բարձրությունը մինչև 1,5 - 1,6մ: | դրամ | 70.000 | 1 | | 2-րդ եռամսայկ մինչև 24.04.2024թ. |
| | **Ազատ ոճի ըմբշամարտի առաջնություն /մայիս 5-10/** Առաջնությունը տեղի կունենա Ա.Մանուկյանի անվան մարզադպրոցում/11 քաշային կարգ/ Անհրաժեշտ է 11 հատ գավաթ /մեծ/, պատվոգիր 44 հատ, մեդալ 44 հատ /1տեղ - 11 հատ, 2 տեղ-11 հատ, 3տեղ -22 հատ/, ձայնային տեխնիկայի սպասարկում, ջուր 0.5լ/20հատ/,մեկանգամյա օգտագործման բաժակ/40 հատ/: | դրամ | 150000 | 1 | | 2-րդ եռամսյակ մինչև 05.05.2024թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Սպորտլանդիա -2024**<br>**/մայիս 8-16/**<br>Համայնքի նախադպրոցական հաստատությունների միջև մարզական մրցույթի մասնակիցներին խրախուսելու համար անհրաժեշտ է 8 հատ մանկական հեծանիվ/ նախատեսված 3-5 տարեկան երեխաների համար, անիվների չափսը՝ 12, արգելակման համակարգ՝ ձեռքի, զամբյուղով, ետևում հավելյալ երկու անիվներով, որոնք կարող են անհրաժեշտության դեպքում դուրս գալ/, 8 հատ ինքնագնաց/4-6 տարեկան երեխաների համար/, զարգացնող քարտեր կենդանիների, մրգերի, բանջարեղենների, մասնագիտությունների թեմատիկայով /16 հատ/, լեգո /30-40 միջին խորանարդիկներով/ դույլով կամ պայուսակով /8 հատ/, գնդակ ռեզինե 3 համարի /8 հատ/: | դրամ | 260.000 | 1 | | 2-րդ եռամսյակ մինչև 08.05.2024թ. |
| | **Հաղթանակի օր**<br>**/մայիսի 9/**<br>Այցելություն քաղաքային պանթեոն, Չարենցավան համայնքի Հայրենական ու Արցախյան պատերազմներում զոհված մարտիկների հուշարձաններ: Անհրաժեշտ է 6 ծաղկեպսակ բաղկացած թարմ ծաղիկներից /40վարդ, 15 գերբերա, 15մեխակ, 4կապ քրիզանթեմ, 4 բիոֆլորայով, հավաքված 1-1,2մ տրամագծով, պենոպլաստե շրջանակի վրա, հետևի ձևավորումը՝ ռուսկուսի կամ պտերի տերևներով, կանաչ ներկված փայտե ոտնակների վրա հենված, օրը խորհրդանշող ժապավենով, գրվող տեքստը՝ ոսկեփայլ, բարձրությունը մինչև 1,5-1,6մ, 300 հատ սպիտակ մեխակ 70 սմ, 250 հատ կարմիր մեխակ 70 սմ: | դրամ | 280.000 | 1 | | 2-րդ եռամսյակ մինչև 09.05.2024թ |
| | **Առաջին Հանրապետության օր**<br>**/մայիսի 28/**<br>Առաջին Հանրապետության օրվան նվիրված միջոցառումը տեղի է ունենալու Կարեն Դեմիրճյանի անվան հրապարակում: Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է տեխնիկայի վարձակալություն և սպասարկում, հաղորդավարի հրավերք, եռագույն դրոշ/20հատ 1x1,5մ/,՝ձող դրոշի համար/20հատ 1,5 մ/, համերգային ծրագիր 1-1,5 ժամ տևողությամբ, առնվազն 2-3 ժողովրդական երգիչների և 2 պարային համույթների հրավեր: | դրամ | 450000 | 1 | | 2-րդ եռամսյակ մինչև 28.05.2024թ. |
| | **Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր**<br>**/հունիսի 1/**<br>Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառման կազմակերպում Կ. Դեմիրճյանի անվան հրապարակում, մանկական համերգ /30ր տևողությամբ/, Երևանի պետական կրկեսի ևհաղորդավարի հրավեր<br>/ 1.5ժամ տևողությամբ/, ակվա | դրամ | 950.000 | 1 | | 2-րդ եռամսյակ մինչև 01.06.2024թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | գրիմ/150/երեխաների համար,քաղցր բամբակ/150 երեխաների համար/, Կազմակերպման համար անհրաժեշտ է ձայնասփռման տեխնիկայի վարձակալություն և սպասարկում, տոնին համապատասխան դեկորի տեղադրում /6*3մ/ կամ փուչիկներով ձևավորում/6*3մ/,կավիճ գունավոր/200 տուփ, փուչիկ գունավոր/800 հատ/: | | | | | |
| | **Սամբոյի առաջնություն**<br>**/հունիս 5-15/**<br>Առաջնությունը տեղի կունենա Ա.Մանուկյանի անվան մարզադպրոցում/10 քաշային կարգ/<br>Անհրաժեշտ է 10 հատ գավաթ /մեծ/, պատվոգիր 40հատ, մեդալ 40հատ /1տեղ -10 հատ, 2 տեղ-10 հատ, 3տեղ -20հատ/, ձայնային տեխնիկայի սպասարկում, ջուր 0.5լ/20հատ/,մեկանգամյա օգտագործման բաժակ/40 հատ/: | դրամ | 140000 | 1 | | 2-րդ եռամսայկ մինչև 05.06.2024թ. |
| | **Մանկապարտեզների ավարտական միջոցառումներ**<br>**/հունիս 5-15/**<br>Ավագ խմբի թվով 450 երեխաների համար գրենական պիտույքների ձեռքբերում:Անհրաժեշտ է /յուրաքանչյուր երեխայի համար 4տետր /12թերթ՝ 2 վանդակավոր, 2 տողանի/, 2 գրիչ /կարմիր,կապույտ/, 1 քանոն գունավոր, նկարներով, 1ռետին, 1 սրիչ, 1 տուփ պլաստիլին 6 գույնով, 1 սոսինձ չոր, 1 նկարչության տետր 18 թերթ, 1 տուփ գունավոր մատիտ 12 հատ, գունավոր թղթեր 10 հատ, 1 թղթապանակ գունավոր՝ շղթայով: | դրամ | 900.000 | 1 | | 2-րդ եռամսյակ մինչև 05.06.2024թ. |
| | **Համայնքի ղեկավարի գավաթ**<br>**/Ֆուտբոլի բաց առաջնություն**<br>**Հուլիս 5-10/**<br>Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է, 3 հատ գավաթ /30սմ, 40սմ և 50սմ բարձրության/, 45 հատ մեդալ /15 հատ - 1, 15 հատ - 2, 15 հատ - 3 գրված/, 3 հատ շնորհակալագիր, 48 հատ դիպլոմ, 46 կոմպլեկտ մարզահագուստ՝ մարզաշապիկ+կիսավարտիք, պոլիէսթերից, գույնը և լոգոն համաձայնեցնել պատվիրատուի հետ, 10 հատ ֆուտբոլի կաշվե գնդակ 5 համարի, 46 հատ թղթե տոպրակ բռնակներով /30*50 չափով/,ձայնային տեխնիկայի սպասարկում, ջուր 50 հատ/0.5լ/: | դրամ | 670.000 | 1 | | 3-րդ եռամսյակ մինչև 05.07.2024թ. |
| | **Վարդավառ**<br>**/հուլիսի 21/**<br>Տեխնիկայի սպասարկում, փրփուր շոուի կազմակերպում, ազգային ավանդական երգի և պարի համույթի հրավեր: | դրամ | 310.000 | 1 | | 3-րդ եռամսյակ մինչև 21.07.2024թ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Երիտասարդության միջազգային օր /օգոստոսի 12/** Բրեյն-ռինգ ինտելեկտուալ խաղի կազմակերպում,ֆուրշետ, համերգ Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ են հուշանվերներ մասնակիցների համար՝ 10 հատ /թեյի բաժակ բռնակով, նկարը՝ օրվա խորհրդանշով, 200մլ տարողությամբ/, 10 հատ մարզական պայուսակ միջին չափի, 10 հատ նոթատետր կաշվե կազմով/,30 հատ թղթե տոպրակներ նվերների համար, 10 հատ պատվոգիր: Մասնակիցների և հյուրերի հյուրասիրության կազմակերպում, որի համար անհրաժեշտ է 20 կտոր խաչապուրի, 20 կտոր կրուասան, 20 կտոր կեքս, բնական հյութ 8 հատ / 1 լ /, լուծվող սուրճ, թեյ, միրգ - / խաղող 2 կգ, կիվի 1 կգ, նարինջ 1 կգ, տանձ 1 կգ, սալոր 1 կգ/, ջուր 8 հատ /0,5լ/: Տեխնիկայի վարձակալություն և սպասարկում, տիջեի և հաղորդավարի հրավեր/2ժամ/ | դրամ | **450.000** | 1 | | 3-րդ եռամսյակ մինչև 12.08.2024թ. |
| | **Խաղողօրհնեք Բջնի գյուղում /օգոստոսի 18/** Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է սեղանի ձևավորում՝ օրվա խորհրդին համապատասխան /հայկական զարդանախշով կտոր /10մ/, 4 հատ զամբյուղ խաղողի, քաղցրավենիքի համար: Հյուրասիրության համար՝ 50 կգ խաղող / խոշոր ՝ կարմիր ու սպիտակ/, 15 շիշ գինի /կիսաչոր, 0,7լ/, 150 հատ գաթա խորիզով /100գ/, 100 հատ կեքս, 100 հատ կրուասան, 100 հատ ջուր /0,5լ/, 20 հատ հյութ /1լ/, 150 հատ մեկ անգամյա օգտագործման բաժակ: | դրամ | 160.000 | 1 | | 3-րդ եռամսյակ մինչև 18.08.2024թ. |
| | **Անկախության օր /սեպտեմբերի 21/** Անկախության օրվան նվիրված միջոցառումը տեղի է ունենալու Կարեն Դեմիրճյանի անվան հրապարակում: Անհրաժեշտ է կազմակերպել օրվա խորհրդին համահունչ բացօթյա ֆիլմի ցուցադրություն: | դրամ | 450000 | 1 | | 3-րդ եռամսյակ մինչև 21.09.2024թ. |
| | **Տարեցների միջազգային օր /հոկտեմբերի 1/** Նարդու մրցաշար,համերգային ծրագիր/1 ժամ տևողությամբ համայնքի երեխաների և տարեցների մասնակցությամբ,ֆուրշետ/ Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է հուշանվեր՝ մարզաշապիկ- /բամբակյա՝ առանց օձիքի, կապույտ գույնի /3 հատ M,S,L չափի/, 3հատ պատվոգիր, 5 շիշ գինի /կիսաչոր կարմիր/, 50 կտոր գաթա, 50 կտոր կրուասան, 3 տուփ սև շոկոլադ, 2կգ խաղող, 2կգ տանձ, 2կգ բանան, 2 կգ արքայանարինջ, 2կգ նարինջ, 30 հատ ջուր /0,5լ/, 30 հատ հյութ /0,5լ/, 100 հատ մեկանգամյա օգտագործման բաժակ, 3 տուփ սեղանի փափուկ անձեռոցիկ, ձայնային տեխնիկայի սպասարկում: | դրամ | 90.000 | 1 | | 4-րդ եռամսյակ մինչև 01.10.2024թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Ուսուցչի տոն**<br>**/հոկտեմբերի 5/**<br>Ուսուցիչներին շնորհավորելու համար անհրաժեշտ է 40 հատ տորթ/ 20 հոգու համար սերուցքային կրեմով, ընկույզի միջուկով, 55 հատ կիսաչոր շամպայն: | դրամ | 500.000 | 1 | | 4-րդ եռամսյակ մինչև 05.10.2024թ |
| | **Գրադարանավարի օր/հոկտեմբեր 7/**<br>Գրքի շնորհանդես գրադարանում, ցերեկույթ երիտասարդ ստեղծագործողների մասնակցությամբ:<br>Անհրաժեշտ է 5 հատ ծաղկեփունջ՝ դաշտային բնական ծաղիկներով՝ ժատե թղթով փաթեթավորված, 1 հատ տորթ 20 հոգու համար սերուցքային կրեմով, 5 հատ բնական հյութ /1լ /, կարմիր կիսաչոր գինի 2 հատ, 2 հատ կիսաչոր շամպայն, 2 տուփ խմորեղեն 10 կտորից բաղկացած, պատրաստված շերտավոր խմորից/ , միրգ / 1 կգ խնձոր, 1 կգ տանձ, 1կգ նուռ, 1 կգ խաղող, 1 կգ բանան, 1 կգ արքայանարինջ, 1 հատ արքայախնձոր/, շնորհակալագիր 10 հատ: | դրամ | 100.000 | 1 | | 4-րդ եռամսյակ մինչև 07.10.2024թ. |
| | **Արիշտայի փառատոն**<br>**/հոկտեմբեր 5-10/**<br>**Բջնի գյուղում**<br>Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է ձայնային տեխնիկայի սպասարկում, տաղավարի վարձակալություն 10 հատ /6ք.մ./, տաղավարների ձևավորման համար հայկական զարդանախշով կտոր /30 մ/, Արիշտայի պատրաստման համար 5 պարկ ալյուր /5 կգ/, 5 տուփ աղ, հյուրասիրության համար 100 հատ ջուր /0,5լ/, 50 հատ հյութ /0,5լ/, 80 կտոր կրուասան, 80 կտոր կեքս: | դրամ | 230.000 | 1 | | 4-րդ եռամսյակ մինչև 05.10.2024թ. |
| | **Ուսանողների միջազգային օր**<br>/նոյեմբերի 17/<br>Համերգ «Զազ համույթի» մասնակցությամբ, / 1,5 ժամ տևողությամբ/, տեխնիկայի վարձակալություն և սպասարկում: 300 հատ հրավիրատոմս /փայլուն ֆոտոթղթով, ոսկեզօծ տառերով, ձևավորումը օրվա խորհրդով/: | դրամ | 720000 | 1 | | 4-րդ եռամսյակ մինչև 17.11.2024թ. |
| | **Ամանոր և Սուրբ Ծնունդ**<br>**/20-25 դեկտեմբեր/**<br>Ամանորյա միջոցառում Կ.Դեմիրճյանի անվան հրապարակում: Միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է ձայնաափոման տեխնիկայի վարձակալություն և սպասարկում, շոու ծրագրի կազմակերպում/1ժամ տևողությամբ/ հրավառություն/1րոպե/, 1 ձմեռ պապի և 1 ձյունանուշի վարձակալություն, հաղորդավարի հրավերք/1.5 ժամ: | դրամ | 400.000 | 1 | | 4-րդ եռամսյակ մինչև 25.12.2024թ. |

**Կրթության,մշակույթի,սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ** ______________ **Ա.ԶԱՔԱՐՅԱՆ**